շրջանի ծովային կյանքը

դինոզավրերը բնակեցրին ինչպես
Ծովային դինոզավրերը հիմնական
ացնում՝ **իխթիոզավրեր**, **պլեզիոզ**
Առաջին երկու խմբերն ապրել են
դարաշրջանի ընթացքում, իսկ մե
վերջին շրջանում (100-65 միլիոն
որը տիրապետող են եղել տրիասի
սկ մոզազավրերը՝ կավճի ժամա
ց բացի ծովերում ապրել են նաև
ր, ձկներ և այլ կենդանիներ:

նում եղել են 2-4 մ երկարությամբ:
ն ծովային կենդանիներով, ձկներով
նականներն ուսումնասիրել են իխ-
թիոզավրերի շուրջ 60 տեսակներ

Շոնիզավրն իխթիոզավրերի
ամենախոշոր տեսակն է:
չափերը հասել են 23
մետրի, համարվում
է աշխարհի ամե-
նամեծ ծովա-
յին սողունը

Մեզոզոյան դա-
րաշրջանի գրեթե ողջ
ընթացքում ծովերի մշտական
բնակիչներ են եղել **պլեզիոզավրերը**,
որոնք բազմացել և նվաճել են Համաշ-
խարհային օվկիանոսը: Նրանց չորս
վերջույթները վեր են ածվել լողա-
թևերի, ունեցել են երկար վիզ և
փոքր գլուխ (որոշ տեսակներ՝ մեծ
գլուխ և կարճ վիզ): Պլեզիոզավրերի տեսակները հասնում են շուրջ
150-ի, դրանցից են՝ **պլիոզավրը**, **էլասմոզավրը**, **լիոպլևրոդոնը**, **կրո-
նոզավրը**, **ռոմալեոզավրը** և այլն: Որոշ պլեզիոզավրեր ունեցել են
մինչև 18 մ երկարություն: Սնվել են ձկներով և ծովային կենդանիներով:
Թթվածին շնչելու համար բարձրանում էին ջրի մակերևույթ:
Հետաքրքիր է, որ Շոտլանդիայի Լոխ-Նեսս լճում, ականատեսների վկա-
յությամբ, իբր բնակվում է պլեզիոզավրի նմանվող մի կենդանի: Սակայն
գիտնականները չեն կարողանում ապացուցել նրա գոյությունը:

Լիոպլևրոդոնն ամենախոշոր
պլեզիոզավրերից էր, ուներ
մինչև 18 մ մեծություն

Կրոնոզավրն
ուներ 12 մետրանոց
մարմին

Էլասմոզավրի
մարմինը հաս-
նում էր 15 մետր
մեծության

Ռոմալեոզավր
(որոշ տեսակներ
մինչև 8 մետր)

Չղջիկը միակ թռչող կաթնասունն է, նրա թռչելու մեխանիզմն ավելի նման է հին պտերոզավրերի, քան ժամանակակից թռչունների մեխանիզմին

Ընձուղտն ամենաբարձրահասակ կենդանին է՝ մինչև 6 մ բարձրությամբ, իսկ քաշը՝ մինչև 750 կգ

Աֆրիկական փիղը ցամաքային ամենամեծ կենդանին է, ունի մինչև 4,5 մ բարձրություն, մինչև 7,5 մ երկարություն և մինչև 7,5 տոննա քաշ

Յուրահատուկ կաթնասուններ են Ավստրալիայում բնակվող **եքիդնան** ու **բադակտուցը**, որոնք շատ նմանություն ունեն սողունների հետ: Նրանց ձագերը ծնվում են ձվից և կերակրվում կաթով: Ենթադրում են, որ այս կենդանիները պահպանել են հին կաթնասունների գծերը, այդ իսկ պատճառով նրանց անվանում են **նախագազաններ**:

Եքիդնան նման է ոզնու

Երկրագնդի ամենամեծ կենդանին՝ **կապույտ կետը**, նույնպես կաթնասուն է, կարող է ունենալ մինչև 33 մ երկարություն և մինչև 190 տոննա քաշ

Բադակտուց

Աքսիս
Եղնիկ
Այծյամ
Մունտժակը
փոքր
եղջերու է,
ապրում է
Ասիայի
հարավում
Պուդու
Մունտժակ
Մարալ
Որմզդեղն
79

Օձեր

Օձերը վերջավորություններից զուրկ սողուններ են: Մարմնի երկարությունը 10 սմ-ից մինչև 12 մ է, մարմինը ծածկված է եղջրային թեփուկներով և վահանիկներով: Գանգի ոսկրերը բարակ են և շարժուն, որի շնորհիվ կարողանում են կոլ տալ խոշոր կենդանիներին: Օձերի բոլոր հայտնի տեսակները գիշատիչ են: Լսողության օրգանները թույլ են զարգացած, օձերը ձայն գրեթե չեն լսում: Տարածված են ամենուր, չեն հանդիպում Անտարկտիդայում, Նոր Զեյլանդիայում, Իռլանդիայում և Պոլինեզիայի մի շարք կղզիներում: Օձերը կերը որսում են խեղդելով, փաթաթվելով նրա շուրջը կամ թունավորելով:

Անակոնդան և **ցանցավոր պիթոնն** ունեն 10 մետրից ավելի երկարություն

Ցանցավոր պիթոնն աշխարհի ամենաերկար օձն է

Անակոնդա

Արքայական կոբրան ամենախոշոր թունավոր օձն է

Հնդկական կոբրա

Ծովային օձ

Հայտնի է ծովային օձերի մոտ 60 տեսակ: Մեծ մասի երկարությունը 1-1,5 մ է, կան նաև մինչև 2,5 մ երկարությամբ տեսակներ: Ծովային օձերն ամենաթունավորն են:



Շնագլուխ վիշապ

Ոսկրային ձկներն ունեն յուրահատուկ օրգան՝ **լողափամփուշտ**, որը ծայնային և շնչառական ֆունկցիաներից բացի, օդով լցվելու և դատարկվելու միջոցով հնարավոր է դարձնում ջրի մեջ ձկան խորասուզվելն ու վեր բարձրանալը:

Ատլանտյան սաղմոն
սաղմոնների ընտանիքի ձկները լայն տարածում ունեն աշխարհում, այս ընտանիքին են պատկանում իշխանը և սիգը

Ծածանի ընտանեցված տեսակը կոչվում է **կարպ**, որը լճակային տնտեսության ամենատարածված օբյեկտն է

Սովորական լոքո

Լոքոն տարածված է Եվրոպայի և Ասիայի քաղցրահամ ջրերում: Լոքոն ոսկրային խոշոր ձկների թվին է պատկանում, ունենում է մինչև 5 մ երկարություն և 300 կգ քաշ: Լոքոյի մարմինը լերկ է, առանց թեփուկների: Գիշատիչ է: Սովորական լոքոն Հայաստանի ջրավազաններում բնակվող ամենախոշոր ձուկն է:

Առաջ կարծում էին, թե 500-600 մետրից ավելի խորություններում կյանքը բացակայում է ծովերում: Սակայն 10 կմ խորության վրա հայտնաբերվել է տափակածկան մի տեսակ:

Մեծ խորություններում լույս բոլորովին չի թափանցում: 1800 մետրը գերազանցող խորություններում բնակվող ձկները, որպես կանոն, ունեն անչափ փոքր աչքեր կամ էլ դրանք իսպառ բացակայում են: Այդպիսի խորության վրա ձկները կարող են տեսնել միայն ինքնալուսարձակող օրգանիզմների լույսը:

Կամբալա

Սապատավոր կարթաձուկը խորջրյա ձուկ է, նրա դնչին կարթ կա՝ ծայրին լույս է կայծկլտում, որի միջոցով կեր է որսում

Կամբալան տիպիկ հատակային ձուկ է, նրա երկու աչքերը գտնվում են մարմնի մի կողմում